

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ընդդեմ Գերմանիայի՝ թիվ 26551/95 Դ. Ի.-ի գանգատի ընդունելիության վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը (Առաջին պալատ) 1996թ. հունիսի 26-ի դեմփակ նիստում, հետևյալ անդամների մասնակցությամբ՝ պրն Կ. Լ. Ռոզակիսի, Նախագահ, տկն Ի. Լիդիի, պրն Ա. Ս. Գյոյոլբյուլուկի, պրն Ա. Վեյտցելի, պրն Մ. Պ. Պելոնպայի, պրն Բ. Մարկսերի, պրն Գ. Բ. Ռեֆիի, պրն Բ. Մոնֆորտիի, պրն Ն. Բրատցայի, պրն Ի. Բեկեսի, պրն Գ. Ռեսի, պրն Ա. Պեռենիցի, պրն Ս. Բիրսանի, պրն Կ. Յերնդլի,

տկն Մ.Ֆ. Բուքիքիոյի, Պալատի քարտուղար,

Հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 25-րդ հոդվածի վրա,

Ելնելով Դ. Ի.-ի՝ Գերմանիայի դեմ 1994թ. օգոստոսի 16-ին ներկայացրած և որպես թիվ 26551/95 գործ 1995թ. փետրվարի 17-ին գրանցված գանգատից, Հաշվի առնելով Հանձնաժողովի կանոնակարգի 47-րդ կանոնով նախատեսված զեկույցը,

Խորհրդակցելով՝ որոշում է.

Փաստերը

Դիմողը՝ ծնված 1938թ., Մեծ Բրիտանիայի քաղաքացի է և բնակվում է Լոնդոնում: Մասնագիտությամբ նա պատմաբան է: Հանձնաժողովում նրան ներկայացնում է Դյուսելդորֆում գործող փաստաբան պրն Յ. Յերմանը:

Գործին առնչվող փաստերը, ըստ դիմողի ներկայացման, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ:

Մյունխենի շրջանային դատարանը (Amtsgericht) 1992թ. մայիսի 5-ին դիմողին դատապարտել է հանգուցյալներին վիրավորելու (Beleidigung) և նրանց հիշատակն անարգելու համար (Verunglimpfung des Andenkens Verstorbener)՝ Գերմանիայի քրեական օրենսգրքի (Strafgesetzbuch) 185, 189 և 194 հոդվածների համաձայն: Դատարանը նշանակել է տուգանք՝ 10,000DM գումարի չափով:

Շրջանային դատարանը գտել է, որ դիմողը 1990թ. ապրիլին կայացած տեղեկատվական ժողովի առիթով ելույթ է ունեցել և իր զեկույցում հայտարարել է, որ Աուշվիտցում երբեք զազախցեր գոյություն չեն ունեցել, և որ այդ զազախցերը հետպատերազմյան ժամանակաշրջանի առաջին օրերին կառուցված կեղծ խցեր էին, այնպես որ գերմանացի հարկատուները մոտ 16 միլիոն գերմանական ֆրանկ են վճարել այդ կեղծիքների համար: Շրջանային դատարանը, հիմնվելով Արդարադատության դաշնային դատարանի նախադեպային իրավունքի վրա, եզրակացրել է, որ յուրաքանչյուր անձ, ով հերքում է նացիստական վարչակարգի օրոք հրեաների սպանությունները, գործում է վիրավորանքի և սպանվածների հիշատակն անարգելու հանցանք: Շրջանային դատարանը նշել է, որ նացիստական վարչակարգի օրոք հրեաների սպանությունները պատմական փաստ է:

Այս և հաջորդ դատավարությունների ընթացքում դիմողին օգնում էր դատապաշտպանը:

1993թ. հունվարի 13-ին Մյունխենի Առաջին մարզային դատարանը (Landgericht) մերժել է դիմողի գանգատը և, հիմնվելով պետական մեղադրողի (Staatsanwaltschaft) բողոքի վրա, տուգանքի չափն ավելացրել է մինչև 30,000DM:

Մարզային դատարանն իր որոշմամբ հաստատել է շրջանային դատարանի փաստացի եզրահանգումները: Հաշվի առնելով դիմողի պաշտպանությունը, ըստ որի քրեական պատասխանատվության հանգեցրած նրա հայտարարությունները ճշմարիտ էին, քանի որ իր հետազոտությունների ընթացքում նա չի գտել Աուշվիտցում հրեաների դեմ գազի կիրառման ոչ մի ապացույց: Մարզային դատարանը, հիմնվելով Դաշնային սահմանադրական դատարանի (Bundesverfassungsgericht) նախադեպային իրավունքի վրա, գտել է, որ 1941-1944թթ. ժամանակահատվածում Աուշվիտցում հրեաների դեմ գազի կիրառումը պատմականորեն հաստատված և հանրահայտ (offenkundig) փաստ է (eindeutig feststehende historische Tatsache) և հետագա ապացուցում չի պահանջում:

1993թ. նոյեմբերի 30-ին Բավարիայի վերաքննիչ դատարանը (Oberlandesgericht) մերժել է իրավունքի հարցերի վերաբերյալ դիմողի գանգատը (Revision): Վերաքննիչ դատարանը հաստատել է Մարզային դատարանի եզրահանգումներն այն մասին, որ հրեաների պարբերաբար սպանությունները, inter alia, Աուշվիտցի համակենտրոնացման ճամբարում՝ հանրահայտ փաստ են և չեն պահանջում հետագա ապացուցում:

1994թ. փետրվարի 11-ին Դաշնային սահմանադրական դատարանը մերժել է դիմողի սահմանադրական գանգատի (Verfassungsbeschwerde) ընդունումը:

Որոշումը հրապարակվել է 1994թ. փետրվարի 22-ին:

ԳԱՆՊԱՏՆԵՐԸ

1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ զրկվել է արդար դատաքննությունից: Այդ կապակցությամբ, դիմողը մասնավորապես գտնում է, որ Մարզային դատարանն անպատշաճ կերպով մերժել է քրեական պատասխանատվության հանգեցրած հայտարարությունների ճշմարիտ լինելու վերաբերյալ ապացույցներ ընդունելը և վիճարկում է դատարանների եզրահանգումներն առ այն, որ այդ դեպքերը պատմական փաստեր էին և, հետևաբար, հանրահայտ փաստեր, որոնք հետագա ապացուցման կարիք չունեն: Նա նաև նշում է, որ Մարզային դատարանը քրեական պատասխանատվության հանգեցրած հայտարարությունները չի գնահատել ամբողջ զեկույցի համատեքստում:

2. Դիմողը գանգատվում է նաև, որ Մյունխենի շրջանային դատարանի կողմից իր դատապարտումը, ինչը հաստատել է նաև Մյունխենի Առաջին մարզային դատարանը, հանդիսանում է իր՝ խոսքի ազատության իրավունքի խախտում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

1. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատվում է, որ ինքը զրկվել է արդար դատաքննությունից, մասնավորապես՝ մերժվել է քրեական պատասխանատվության հանգեցրած հայտարարությունների ճշմարիտ լինելու վերաբերյալ ապացույցների ընդունումը:

Համձնաժողովը չի գտնում որևէ վկայություն այն մասին, որ դատապաշտպանի օգնությունից օգտվող դիմողը չէր կարող ի պաշտպանություն իրեն՝ պատշաճ կերպով

Ներկայացնել իր փաստարկները կամ չէր կարող արդյունավետորեն իրականացնել պաշտպանության իր իրավունքները, կամ որ դատավարությունները որևէ կերպ անարդարացի են եղել:

Ինչ վերաբերում է նրա գանգատի այն մասին, որ ապացույցներ չեն ընդունվել և չեն գնահատվել, Հանձնաժողովը հիշեցնում է, որ, որպես ընդհանուր կանոն, հենց ներպետական դատարանները պետք է գնահատեն իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև պաշտպանյալների ներկայացրած ապացույցների վերաբերելիությունը: Ավելի հանգամանորեն, 6-րդ հոդվածի 3 (d) կետը, դարձյալ որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարաններին է թողնում որոշելու՝ արդյո՞ք հարկ է դատակոչել վկաների՝ այս բառի «ինքնավար» իմաստով, ինչպես այն գործածվում է Կոնվենցիայի համակարգում: Այն չի պահանջում բոլոր վկաների ներկայությունը և մեղադրյալի կողմից նրանց հարցաքննումը (հմտ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Բրիկնոնտի՝ 1989թ. հուլիսի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ.158, էջ 31, կետ 89. Վիդալի՝ 1992թ. ապրիլի վճիռը, Շարքեր Ա, թիվ 235-B, էջեր 32-33, կետ 33):

Հանձնաժողովը նշում է, որ Մարզային դատարանը 1993թ. հունվարի 13-ի իր վճռում գտել է, որ դիմողի հայտարարությունների ճշմարիտ լինելու վերաբերյալ հետագա ապացույցներ ներկայացնելու կարիք չի եղել, քանի որ Աուշվիտցում հրեաների դեմ գազի կիրառումը պատմականորեն ապացուցված և, հետևաբար, հանրահայտ փաստ է: Վերաքննիչ դատարանը, հիմնվելով Դաշնային սահմանադրական դատարանի՝ հանրահայտ տերմինի մեկնաբանման վերաբերյալ նախադեպային իրավունքի վրա, հաստատել է այդ եզրահանգումները:

Նշված հանգամանքներում՝ Հանձնաժողովը ոչ մի բավարար հիմք չի գտնում համարելու, որ տվյալ գործում կար որևէ հատուկ հանգամանք, ինչը կարող էր հանգեցնել այն եզրակացության, թե հետագա ապացույցներ չընդունելն անհամատեղելի էր 6-րդ հոդվածի հետ (հմտ. թիվ 9235/81, դեկ. 16.7.82, D.R. 29, էջ 194. թիվ 25096/94, դեկ. 6.9.9, D.R. 82-A, էջ 117):

Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է՝ 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

2. Դիմողը նաև գանգատվում է գերմանական դատարանի դատավճիռների դեմ, որոնցով նրան դատապարտել են վիրավորանքի և հանգուցյալների հիշատակն անարգելու համար: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

10-րդ հոդվածի՝ գործին վերաբերող մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության...»

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու...»:

Հանձնաժողովը գտնում է, որ վիճարկվող պատժամիջոցը միջամտություն է դիմողի՝ ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացմանը: Այսպիսի

միջամտությունը 10-րդ հոդվածի խախտում է, եթե միայն այն չի արդարացվում 10-րդ հոդվածի 2-րդ կետով, այսինքն՝ այն պետք է «օրենքով նախատեսված» լինի, օրինական նպատակ կամ նպատակներ հետապնդի՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, և «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինի:

Միջամտությունը «նախատեսված էր օրենքով», այն է՝ Քրեական օրենսգրքի դրույթներով:

Միջամտությունը նաև Կոնվենցիայով նախատեսված օրինական նպատակ էր հետապնդում, այսինքն՝ «անկարգությունները կամ հանցագործությունները կանխելը» և «այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելը»: Մնում է պարզել, թե արդյո՞ք միջամտությունը կարող է համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ «անհրաժեշտ» ածականը 10-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում ենթադրում է «անհետաձգելի հասարակական կարիքի» առկայությունը: Պայմանավորվող պետություններն ունեն գնահատման որոշակի սահման՝ միջամտության անհրաժեշտությունը և միջամտության շրջանակները գնահատելիս, սակայն այս սահմանը ենթակա է եվրոպական վերահսկողությանը: Այսպիսով, ներպետական մակարդակով կիրառվող միջոցները պետք է լինեն սկզբունքորեն արդարացվող և համաչափ (հմմտ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Օբզերվեր» և «Գարդիան» թերթերի՝ 1991թ. նոյեմբերի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 216, էջեր 29-30, կետ 59):

Հանձնաժողովը գտնում է, որ Քրեական օրենսգրքի՝ խնդրո առարկա դրույթները և տվյալ գործով դրանց կիրառումը նպատակ ունեին ապահովելու Գերմանիայի Դաշնային Հանրապետության բնակչության խաղաղ գոյակցությունը: Հանձնաժողովը հաշվի է առել նաև Կոնվենցիայի 17-րդ հոդվածը: Այս դրույթը սահմանում է.

«Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով»:

Այսպիսով, 17-րդ հոդվածը կանխարգելում է, որպեսզի անձը Կոնվենցիայից չբխեցնի այնպիսի գործունեությամբ զբաղվելու իրավունք, որն ուղղված է Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը (հմմտ. թիվ 12194/86, դեկ. 12.5.88, D.R. 56, էջ 205. թիվ 25096/94, loc. cit.):

Ինչ վերաբերում է տվյալ գործի հանգամանքներին, Հանձնաժողովը նշում է Մարզային դատարանի կողմից հաստատված՝ Շրջանային դատարանի եզրահանգումները դիմողի կողմից իր ելույթի համատեքստում կատարված՝ Աուշվիտցի համակենտրոնացման ճամբարի գազախցերի գոյությունը ժխտող՝ քրեական պատասխանատվության հանգեցրած հայտարարությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ դիմողի հայտարարություններն արտահայտում են ռասայական և կրոնական խտրականություն և հակասում են Կոնվենցիայի նախաբանում արտահայտված հիմնական գաղափարներից մեկին, այն է՝ արդարություն և խաղաղություն:

Հրեաների նկատմամբ վիրավորական վերաբերմունքի հետևանքով Պերմանիայի բնակչության մեջ հանցագործությունն ու անկարգությունները կանխելու հասարակական շահը, ինչպես նաև նրանց հեղինակությունն ու իրավունքները պաշտպանելու պահանջները ժողովրդավարական հասարակությունում գերակայում են նացիստական վարչակարգի օրոք հրեաների նկատմամբ գազի կիրառման փաստը ժխտելու վերաբերյալ հրապարակումներ կատարելու՝ դիմողի ազատությանը (հմնտ. թիվ 9235/81, դեկ. 16.7.82, D.R. 29, էջ 194. թիվ 25096/94, loc. cit.):

Այս հանգամանքներում, հիմնավոր և բավարար պատճառներ են եղել դիմողին դատապարտելու համար: Ուստի դիմողի՝ ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտությունը կարող է համարվել «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Համապատասխանաբար, ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ դիմողի իրավունքի խախտում չի դիտվում:

Սրանից հետևում է, որ գանգատի այս մասը ևս ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Այս հիմքերով՝ Հանձնաժողովը միաձայն

ԳԱՆԳԱՏԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ:

Մ. Ֆ. Բուքիքիո
Առաջին պալատի քարտուղար

Կ. Լ. Ռոզակիս
Առաջին պալատի նախագահ